Դանիել Վարուժան

Հայր, օրհնե՛

Հայր իմ, օրհնե՛. ժամը հասավ. պիտի երթամ.
Նոր կյա՛նք մ՝ինծի կը սպասե
Պատմությունն ես թողուցի. նոր արյուն
Երակիս մեջ կը վազե:

Հառա՛ջ, հառա՛ջ. - գըլուխս ետ չե՛մ դարձներ.
Երկընքես վա՛ր թող իյնան
Անվիշտ կյանքիս ամեն աստղեր.հոգըս չէ՛.
Անցյալս իջնա թող դամբան:

Օհ, ինծի՛ ինչ թե կը փետեմ վարդին թերթ,
Եվ փուշին կյանք կու տամ միշտ,
Թե գրկաբաց հորձանքին մե՛ջ կը նետվին.
Խինդս է՝ ձանձրույթ, սերս է՝ վիշտ:

Ամեն խայտանք ջախջախեցին սըրտիս մեջ.
Չեմ վախենար սև ծրծեծել.
Վանք մըտնող կույս մեմ՝ որ խըզված իր վարսեր՝
Անխիղճ անհոգ, կը դիտե՛…

Հա՛յր, ես կերթամ այն ճամբայեն՝ որ ճերմակ
Մազերուդ զիզ կտանին,
Վաստակաբեր ոսկրներուդ, ծեր սրտիդ

Եվ սերուդ կենդանի.

Բավական է.- աշխատեցար, կրրեցիր,
Ամեն նետի հարվածի
Վահան եղար ինձի համար. հոգիտ է՝
Որ հոգվույս մեջ կը հածի:

Իմ արյունս է գողացած քու քրրտինքեդ.
Հոգնությանդ ծիլն եմ տրխուր:
Հոգիտ, Կաղնի՛, երբ կուրծք կուտար մրրրրիկին՝
Ես շուքին տակ, հանգիստ, լուռ

Կը մեծանայի :-Հարկ է հիմա ա՛լ հանգչիս
Եվ ես քեզի հաջորդեմ…
Խոնջե՛նք, խոնջե՛նք. կուզեմ կրռվիլ, աշխատիլ,
Ելլել կյանքին, կյանքին դեմ…

Հայր իմ, օրհնե՛. դողդոջ ձեռքերդ գրլխուս դիր.
Թող մատերդ կաթի վայր
Աղոթքդ՝ եկած հոգվյուդ պայծառ խորանեն:
Վերջին ժամն է. օրհնե՛, հայր: